Կարծիք

ԻԳ.00.02 «քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Գևորգ Մարտիկի Ղուկասյանի ներկայացրած «Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման դերակատար» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Նոր աշխարհակարգի ձևավորման և կայացման գործընթացում հայրենիք-սփյուռք տեսակիրառական հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրությունը արդի քաղաքական գիտության զարգացման առանցքային ուղղություններից է: Այդ դիտանկյունից արդի գլոբալ անորոշությունների և տուրբուլենտության պայմաններում հրամայական է «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքների կիրառելիությամբ բազմամակարդակ ուսումնասիրել էթնիկ լոբբինգի գործունեության արժեքաբանությունը: Հետևաբար, **«Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման դերակատար» թեմայի համակողմանի ուսումնասիրումը** անհրաժեշտություն է, քանի որ միայն այդպիսի մոտեցման շրջանակներում է հնարավոր համակարգված բացահայտել հայկական էթնիկ լոբբինգի քաղաքական գործունեության դերակատարումը արդի միջազգային քաղաքականության կառուցվածքում: Ավելին, միգրացիոն անկառավարելի հոսքերի և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրելու սփյուռքի տեղն ու դերը գլոբալ կառավարման համակարգում՝ որպես անդրազգային քաղաքական դերակատարի: Այս համատեքստում, նկատի պետք է ունենալ, որ սփյուռքը, բազմաչափ հարաբերությունների մեջ մտնելով իր պատմական հայրենիքի և պետության, ինչպես նաև ընդունող պետության հետ, ինքնադրսևորվելով և ինքնիրացվելով ստեղծում է էթնիկ լոբբիստական կազմակերպություններ և ստանձնում էթնոպաշտպան գործառույթ: Վերջիններիս միջոցով նպատակ է հետապնդվում ոչ միայն մասնակցելու հայրենի պետության և ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքի կառավարմանը, այլև, միաժամանակ համագործակցել ընդունող պետության հետ՝ որպես այդ պետության ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքացիական մշակույթի կրող: Հայաստանի անկախացումից հետո, հայրենիք-սփյուռք հարաբերությունների շարունակական կերպափոխմամբ պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել արդի գլոբալ անորոշությունների և տուրբուլենտության պայմաններում վերարժևորելու էթնիկ լոբբինգի գործունեության արժեքաբանությունը՝ ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունների հետագա զարգացման շրջանակում:

Այսպիսով, **«Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման դերակատար» թեմայի համակողմանի ուսումնասիրումը** անհրաժեշտ է, քանի որ

այդ շրջանակներում է միայն հնարավոր համակարգված բացահայտել հայկական սփյուռքի, մասնավորապես դրա քաղաքական գործունեության հիմնական գործառնողի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ դերակատարումը արդի միջազգային հարաբերություններում:

Նկատի ունենալով արդի ցանցային ռիսկերի անորոշության և տուրբուլենտության կառավարումը՝ էթնիկ լոբբինգի իր ռազմավարությունը կառուցում է հանրային, մասնավոր և խմբային շահերի միջև փոխհարաբերությունների համադրման վրա՝ հնարավորություն տալով նրանցից յուրաքանչյուրին դերակատարում ստանձնելու համագործակցային անվտանգության ապահովման գործընթացում: Այսպիսով սփյուռքը հանդես է գալիս նաև որպես իր էթնիկ պատկանելիության էութենականացման այլընտրանք՝ հնարավորություն տալով ապատարածականացնելու ինքնությունը:

Ներկայացված ատենախոսությունն արդիական է նաև ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների արդյունավետ զարգացման, Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի ռացիոնալացման, ինչպես նաև հայկական էթնիկ լոբբինգի գործունեության վերարժևորման ու հետագա զարգացման նպատակներով: Էթնիկ լոբբինգի ուսումնասիրումը հնարավորություն կտա ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործընթացում մշակելու ռազմավարական քաղաքականություն՝ կառավարման «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքերի կիրառելիության շրջանակներում: Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ էթնիկ լոբբինգը, հանդիսանալով միջազգային քաղաքական գործընթացների դերակատար, մշտապես արդիական ուսումնասիրման թեմա է:

Փաստորեն, նոր աշխարհակարգի ձևավորման և կայացման գործընթացները հայկական էթնիկ լոբինգի համակարգային ուսումնասիրության անհրաժեշտություն են ստեղծել, ինչն էլ անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ հնարավորություն է տալիս գնահատել քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացների արդյունավետությունը:

Ներկայացված ատենախոսությունը եզակի նախաձեռնություն է համակարգված ուսումնասիրելու Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունների զարգացման դերակատար այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ԵՄ-ում տեղի են. իրենց բնույթով նոր քաղաքական զարգացումներ, որոնք ազդեցություն ունեն նաև Հարավային Կովկասի վրա:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև գերարագ փոփոխվող աշխարհի տարբեր երկրներում ժամանակից մարտահրավերներին պատասխանելու նկատառումներով էթնիկ լոբբինգի նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ: Ավելին, զարգացած երկրներում գործող էթնիկ լոբբինգը, կիրառելով քաղաքական զարգացման և արդիականացման սկզբունքները, հաճախ անտեսում է սեփական հայրենի երկրի հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ առանձնահատկությունները:

Այդ դիտանկյունից ուսումնասիրված թեման առավել քան արդիական է, քանի որ բացահայտում է սփյուռքի քաղաքական գործունեության ռացիոնալացման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության շուրջ ծավալված անվտանգության գոյաբանական ռիսկերի պայմաններում՝ շեշտելով միջէթնիկ հակամարտություններում սփյուռքի ներառված լինելու հանգամանքի ուսումնասիրումը:

Բացի դրանից, այս թեմայի համալիր հետազոտությունն առանձնահատուկ կարևորվում է Հարավային Կովկասի քաղաքական զարգացման և արդիականացման սկզբունքների ու գործիքների կիրառելիության բացահայտման ու արդյունավետության չափման, այդ հիմքով քաղաքականության էությանը բնորոշ հատկանիշների, հռչակված մոտեցումների և գործնական դրսևորումների փոխազդեցության պարզաբանման նկատառումներով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, վերլուծված է նրա տեսական և գործնական նշանակությունը, ուսումնասիրության մեթոդները, շարադրված են նրա նպատակներն ու խնդիրները, մատնանշված է աշխատանքի գիտական նորույթը, կարևորված են տեսական և կիրառական նշանակությունը:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ ատենախոսությունում համակարգված ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առաջադրված խնդիրները: Ատենախոսության եզրակացությունում հանրագումարի են բերվել հիմնական արդյունքները, կատարվել են հայեցակարգային բնույթի եզրահանգումներ ու ընդհանրացումներ:

Աշխատանքի համապատասխան հատվածներում մասնավորապես, վերլուծել է էթնիկ լոբբինգի կառուցվածքագործառնական, արժեքաբանական և վարքաբանական առանձնահատկությունները: Հեղինակին հաջողվել է բացահայտել և համակարգված ներկայացնել հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն եռանկյունու բոլոր կողմերի փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, ինչպես նաև էթնիկ լոբբինգի արդի անդրազգային քաղաքական դերակատարումը: Ատենախոսը կարևորելով Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգի դերակատարության հնարավորությունը ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման գործընթացում՝ առաջարկում է ՀՀ-ի զարգացմանն օժանդակելու՝ եվրոպահայ էթնիկ լոբբինգի քաղաքական առաջնահերթությունը վերաձևակերպել որպես օժանդակություն ՀՀ-ի բնականոն արդիականացմանը: Ատենախոսը քննության է առել Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը, Եվրոպայի հայկական լոբբիի կառուցվածքը, քաղաքական առաջնահերթությունները: Առանձնակի գնահատելի է հեղինակ Գ. Ղուկասյանի կողմից էթնիկ լոբբինգի կիրառելիության շրջանակներում «փափուկ ուժի» տեսության դրսևորման առանձնահատկությունների բացահայտումը:

Արժեքավոր է հեղինակի կողմից բազմամշակութայնության էությանն ու բնույթին նվիրված համակարգված տեսամեթոդաբանական վերլուծությունը: Ըստ հեղինակի՝ բազմամշակութայնությունը ներկայումս կարևորվում է՝ պայմանավորված միգրացիոն

դժվարկառավարելի հոսքերով, ԵՄ անդամ պետություններում ծայրահեղ աջ քաղաքական հոսանքների ակտիվացմամբ, ԵՄ ժողովուրդների էթնիկ պահանջմունքների բավարարմամբ և ներմիութենական համերաշխության պահպանման հրամայականով: Ելակետ ընդունելով Ու Կիմլիկայի կողմից առաջարկված բազմամշակութայնության դրսևորումները, ատենախոսը եզրահանգում է, որ բազմամշակութայնությունը պետության համար ունի կարգավորիչ և ապագան կառավարող գործառույթ: Առանձնակի ուշագրավ ենք համարում, որ բազմամշակութայնության ֆենոմենը, հեղինակի կողմից դիտարկված և վերլուծված է որպես գաղափարական կողմնորոշումների և քաղաքական գործունեության երաշխավոր: Համոզված ենք, որ նմանօրինակ մոտեցումն է, որ սփյուռքին հնարավորություն է տալիս մասնակցելու ինստիտուցիոնալացված ինքնության քաղաքականության ապահովման գործընթացներին: Այս դիտանկյունից էլ ատենախոսը, վերլուծելով լոբբինգի վերաբերյալ ԵՄ օրենսդրահիրավական և կառուցակարգային կարգավորումները, բացահայտել է, որ ԵՄ-ում հիմնականում նկատի է առնված ոչ թե էթնիկ լոբբինգը, այլ լոբբինգի տնտեսական և սոցիալական տարատեսակները: Ըստ ատենախոսի՝ եվրոպական քաղաքական մշակույթը սփյուռքյան էթնիկ լոբբինգն առավելապես դիտում է իբրև շահային խումբ:

Ատենախոսը ներկայացրել է համաեվրոպական մակարդակում Եվրոպայի հայկական լոբբիի աշխատանքային հիմնական ուղղությունները, վերլուծվել է հայկական հիմնական լոբբիստական կազմակերպության՝ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործունեության բնույթն ու ազդեցության շրջանակը: Եզրահանգվել է, որ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի պարագայում, ի տարբերություն, օրինակ, ԱՄՆ-ի և Կանադայի, լոբբիստական կազմակերպություն-համայնք կապն այնքան էլ ուժեղ չէ: Եվրոպայի հայկական լոբբին հաճախ է հենվում եվրոպահայության ներուժի վրա, բայց հիմնականում քարոզչական դաշտում: Եվրոպայի հայկական լոբբին չի կարողանում եվրոպահայության ներուժը վերածել ընտրական հնարավորության և այդպիսով եվրոպական քաղաքական շրջանակներում ձեռք բերել ազդեցության հավելյալ գործիքներ: Հայ դատի Եվրոպայի գրասենյակի հարաբերությունները ԵՄ գործադիր թևի հետ սահմանափակվում են գլխավորապես բաց նամակների հրապարակմամբ և պատգամավորական գրավոր հարցումներով: Եզրահանգվել է, որ Եվրոպայի հայկական լոբբին, ի դեմս Հայ դատի Եվրոպայի գրասենյակի, Եվրոպական միության ղեկավար կառույցներից միայն Եվրոպական խորհրդարանի վրա ազդեցություն ունի, իսկ ԵՄ իշխանության գործադիր մասի նկատմամբ ազդեցություն, որպես այդպիսին, չունի:

Տրված են Եվրոպայի հայկական լոբբիի գործունեության վերարժևորման և բնականոն արդիականացման տեսամեթոդաբանական և գործնական կիրառելիություն ենթադրող առաջարկներ (էջ 58):

Սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և հանդիսանում է նրա հիմնական դրույթների նույնական արտացոլումը:

Չցանկանալով ստվերել ատենախոսության գիտական որակը՝ հարկ ենք համարում կատարել հետևյալ դիտողությունները, որոնց միջոցով ցանկանում ենք երկխոսել հեղինակի հետ.

1. Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե երկրորդ գլխի առաջին ենթավերնագրում հեղինակը քննարկեր Եվրոպայի հայկական գաղթօջախների էվոլյուցիան պատմական հոլովույթում: Դա հնարավորություն կտար որոշակիացնել Եվրոպայի հայկական սփյուռքի ձևավորման, զարգացման և փախակերպման գործընթացները և հասկանալ դրանց ազդեցությունը էթնիկ լոբբինգի վրա:

2. Գնահատելի ենք համարում այն, որ հեղինակը էթնիկ լոբբինգը ուսումնասիրելով «փափուկ ուժի» տեսության կիրառելիության շրջանակներում, առաջարկում է «օգտվել հանրային դիվանագիտության ընձեռած լայն հնարավորություններից ու գործիքակազմերից» (էջ 79): Այս մոտեցումը հեղինակի կողմից պետք է առավել խորը ուսումնասիրվեր, ինու ոչ գուցե առանձին ենթավերնագրի տեսքով: Դա հեղինակին հնարավորություն կտար առավել ընդգծված վերլուծել էթնիկ լոբբինգի գործընթացում «փափուկ ուժի» և «խելացի ուժի» կիրառման առանձնահատկությունները:

3. Քաղաքական գիտության մեջ լոբբինգի ինստիտուտը քննարկում են միջգիտակարգային շրջանակներում: Հատկապես ռացիոնալ ընտրության տեսության շրջանակներում կարևորվում է լոբբինգի ֆինանսական և քաղաքատնտեսական հիմնախնդիրները: Այս դիտանկյունից աշխատանքը կշահեր, եթե հեղինակը բացահայտեր Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգի ֆինանսական հոսքերի ապահովման հիմնախնդիրները:

4. Աշխատանքը կշահեր եթե համեմատական քաղաքագիտության շրջանակներում հեղինակը վերլուծեր Եվրոպայում գործող այլ էթնիկ լոբբինգների գործունեության առանձնահատկությունները և նրանց դիրքորոշումը հայկական լոբբիի նկատմամբ:

5. Աշխատանքում առկա են ոչ էական տեխնիկական թերություններ: Մասնավորապես տողատակի հղումները գրված են միանման՝ և՛ ուղղակի խոսքի, և՛ անուղղակի խոսքի մեջբերման պարագայում:

Անկախ նշված դիտողություններից, ատենախոսությունն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ և տրամաբանական հաջորդականությամբ:

Գ. Ղուկասյանի ատենախոսությունն ունի գիտական և կիրառական արժեք, և տեսական առումով սպառիչ պատասխանում է հեղինակի կողմից բարձրացված՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի «իրավաքաղաքական գործունեությունը լեգիտիմ և լեգալ կազմակերպելու» մարտահրավերին: Գ. Ղուկասյանն իր առջև դրված խնդիրներն ու նպատակները կատարել է ամբողջապես, ատենախոսությունում առկա են համապատասխան առաջարկություններ, եզրահանգումներ և գիտական նորույթ: Աշխատանքը գրված է գիտական և գրագետ լեզվով, ունի գիտավերլուծական բնույթ,

հետազոտվող նյութը փաստարկված է: Օգտագործված հսկայածավալ գրականության և համապատասխան փաստաթղթերի վերլուծությամբ ատենախոսին հաջողվել է միանգամայն նորովի և համակարգային վերլուծության ենթարկել Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգին վերաբերող հիմնահարցերը:

Ատենախոսության հիմնական տեքստում և սեղմագրում կատարված առաջարկություններն ու եզրակացությունները համապատասխանում են թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակի հրապարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության մեջ ներկայացված տեսական և կիրառական եզրահանգումներն ու առաջարկությունները:

Արդի քաղաքական գործընթացներում սփյուռքի դերակատարումը իրատեսորեն գնահատելու համար Եվրոպայի հայկական լոբբին՝ որպես ՀՀ-ի և ԵՄ -ի հարաբերությունների զարգացման դերակատար ուսումնասիրելը այսօրվա հրամայականն է: Այս առումով, հաշվի առնելով աշխատանքի արդիականությունը և որակը, կարծում ենք, որ անհրաժեշտ է այն նաև տպագրել կարճ ժամկետներում:

Թեմայի արդիականությունն ու գրագետ շարադրանքի կուռ տրամաբանությունը, հետազոտության հեղինակի գիտական բարեխղճությունը, ինչպես նաև հիմնավորված եզրահանգումներն ու առաջարկությունները հնարավորություն են տալիս փաստելու, որ Գ.Մ. Ղուկասյանի **«ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ»** թեմայով ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.02 - **«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս, քաղաքական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Փ. Ենգոյան

Գ.Մ. Ղուկասյանի ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, քաղաքական գիտությունների դոկտոր Ա.Փ. Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ Մ. Վ. Հովհաննիսյան

14.06. 2023